



Չորեք
բենզալցակայանում

3




5

Ապրելը
պատասխանատվություն
կրելն է

Անտիուտոպիա
բոլոր դռները

6



արտակարգ թերթ

„ 38 (263) 24.10.2008 - 30.10.2008 www.emergency.am

Անհատական գործընկերություն՝ նաեւ ձգնաժամային կառավարման ոլորտում

Չոկտեմբերի 20-ին, պաշտոնական այցով Հայաստան ժամանած, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ԱՍՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի գլխավորած պատվիրակության ընդունեց

նախագահ Սերժ Սարգսյանը: Հանդիպման ընթացքում Հայաստանի Նախագահին ասել է, որ եվրոպական ուղղությունը շարունակում է մնալ մեր երկրի արտաքին քաղաքական գերակայություններից մեկը եւ ԱՍՏՕ-ի հետ համագործակցությունը

դրա կարեւորագույն տարրերից է: Եվրատալանտյան դաշինքի հետ փոխգործակցությունը կրելու է շարունակական բնույթ, հետեւաբար Հայաստանն այն դիտարկում է մեր երկրի անվտանգության բաղկացուցիչ մաս: Ռոբերտ Սիմոնսն իր հերթին մատնանշելով հարաբերությունների զարգացման համար առկա լավ նախապայմանները՝ հավելել է, որ ԱՍՏՕ-ն ողջունում է պաշտպանում է ՀՀ նախաձեռնությունն ու վճռականությունը Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Զրուցակիցները մտքեր են փոխանակել տարածաշրջանում անվտանգության եւ կայունության ապահովման հետ կապված խնդիրների շուրջ:

Չոկտեմբերի 21-ին Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում

յում ԱՍՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսի գլխավորած պատվիրակությանը հյուրընկալեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Սիեր Շահգեղյանը: Հանդիպմանը մասնակցում էին նաեւ Հարավային Կովկասում ԱՍՏՕ-ի փոխգործակցության սպա Զբիգնեւ Ռիբացկին, ԱՍՏՕ-ի քաղաքական բաժնի Հայաստանի հարցերով պատասխանատու Լորենց Մայեր-Միննեման, ԱՍՏՕ-ի առաքելությունում ՀՀ մշտական ներկայացուցչական ղեկավար, դեսպան Սամվել Սկրտչյանը, ԱԳՆ սպառազինությունների վերահսկման եւ միջ. անվտանգության ԱՍՏՕ-ի բաժնի վարիչ Արման Իսրայելյանը եւ ՀՓՓ տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը:

Հանդիպման ժամանակ կարեւորվեց այն հանգամանքը, որ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրում զգալի տեղ են զբաղեցնում աղետների կառավարման հիմնահարցերը:

- ԱՍՏՕ-ի հետ համագործակցության առումով ԱԽՆ-ը նույնպես մեծ դերակատարում ունի, - նման համոզմունք հայտնեց Ռոբերտ Սիմոնսը եւ անդրադարձավ ձգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծման խնդիրներին ու անհրաժեշտությանը:

ԱՆ նախարարը եւս կարեւորեց արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում ԱՍՏՕ-ի հետ գործակցությունը, նշեց կատարած աշխատանքները, զարգացման ուղղությունները, ուրվագծեց այս ոլորտի զարգացման տեսլականն ու իր համաձայնությունը տվեց 2010 թվականին ԱՍՏՕ-ի անդամ ու գործընկեր երկրների արտակարգ իրավիճակների կառավարման ուսումնավարժությունը Երեւանում անցկացնելու Ռ. Սիմոնսի առաջարկությանը:



Պատրաստ՝ արտակարգ իրավիճակներին

Աջափնյակ համայնքը Երեւանի հյուսիս-արեւմտյան մասում է: Այն 25,68 քառ. կմ տարածք, 106 500 բնակիչ ունի: Համայնքում կառուցված 409 բազմաբնակարան շենքերից 144-ը պանելային են, 265-ը՝ քարե: Սեյսմիկ տեսանկյունից այն Երեւանի ամենախոցելի հատվածներից է, որտեղ էլ հոկտեմբերի 17-ին անցկացվեց «Երեւան քաղաքի Աջափնյակ թաղային համայնքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը եւ կառավարումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն:

Հրամանատարաշտաբային ուսումնավարժության նպատակներն էին.

• ստուգել Երեւան քաղաքի ղեկավար մարմինների, ինչպես նաեւ Երեւան քաղաքի փրկա-

րարական վարչության պատրաստակա՞նությունը՝ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների ղեկավարման գործում.

• կատարելագործել Երեւան քաղաքի ղեկավար կազմի եւ Երեւան քաղաքի փրկարարական վարչության ունակությունները երկրաշարժի դեպքում, բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ընթացքում.

• ճշգրտել եւ կատարելագործել երկրաշարժի դեպքում համայնքային ծառայությունների փոխգործողությունները.

• ուսումնավարժության ընթացքում կիրառելով ժամանակակից էլեկտրոնային համակարգերը եւ ծրագրերը (GIS), գնահատել առկա սպառնալիքը եւ ուսումնասիրել Երեւան քաղաքի հնարավորությունները՝ ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման հարցում: » 4



«Էլիտ գրուպ» առաջարկում է կյանքի նոր որակ




Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպ» Երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար: Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:

Հայաստանի փրկարար ծառայությունը զանգահարեք **1-01, 1-12**

Ավտոպատահար

Հոկտեմբերի 18-ին Գեղարքունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 05.00-ի սահմաններում Սեան-Մարտունի ավտոճանապարհի 61-րդ կմ-ին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Դեռևս չպարզված հանգամանքներում, «ՎԱՉ-2107» մակնիշի 31 LO 886 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից եւ շրջվել:

Պատահարի հետեանքով ավտոմեքենայի վարորդը՝ Գեղարքունիքի մարզային փրկարարա-

կան վարչության փրկարարական ջոկատի վարորդ, 1963 թ. ծնված Արսեն Կարապետյանը, տեղում զոհվել է, իսկ ուղեւոր, 1974 թ. ծնված Գ. Խզմայանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Մարտունու քաղաքային հիվանդանոց եւ ստանալով առաջին բուժօգնություն՝ դուրս է գրվել:

Հոսանքահարվել է

Ըստ Շիրակի մարզից ստացված տեղեկության, հոկտեմբերի 18-ին Արթիկ-Նոր Կյանք ավտոճանապարհին հարակից բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի հենասյան վրա հոսանքահարվել է Արթիկ քաղաքի Ալաքարյան փողոցի 42 տան բնակիչ, 1988 թ. ծնված Գրիշա Ռաշոյանը:

Դեպքի վայր մեկնած փրկարարները հենասյան վրայից իջեցրել են Գ. Ռաշոյանի դիակը եւ հանձնել իրավապահ մարմիններին:

Նետվել է կամրջից

Հոկտեմբերի 18-ին ահազանգ է ստացվել, որ Ստեփանավան քաղաքի կամրջից մարդ է նետվել

ծորը, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած «Լոռէ» փրկարարական ջոկատի ուժերով ծորից դուրս է բերվել մարզի Կաթնաղբյուր գյուղի բնակիչ, 1949 թ. ծնված Կոլոդյա Մանուկյանի դիակը եւ հանձնվել իրավապահ մարմիններին:

Հայտնաբերվել է դիակ

Հոկտեմբերի 19-ին Գեղարքունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 10.00-ին Սեանի թիվ 2 հանգստյան տանը (Ծովագյուղի մոտակայքում) հարակից Սեանա լճում հայտնաբերվել է դիակ, եւ այն ջրից դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած ջրափրկարարները ջրից դուրս են բերել անձը չպարզված 45-50 տարեկան տղամարդու դիակ:

Շնուլ գազից

Հոկտեմբերի 23-ին շնուլ գազից թունավորումով Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել Շիրակի մարզի Ախտրյան գյուղի բնակիչ, 1962 թ. ծնված Ռուզաննա Մաթետոյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը ծանր է:

Հրդեհներ Հանրապետության տարածքում գրանցվել է հրդեհի բռնկման 36 դեպք:

Խոտ, անասնակեր...

Հոկտեմբերի 16-ին Հրազդանի Երեանյան խճուղու 2-րդ տան բակում բռնկված հրդեհի հետեանքով այրվել է 850 հակ խոտ:

Հոկտեմբերի 19-ին Լոռու մարզի Մեծավան գյուղի բնակիչ Խ. Սիմիկյանի տան բակում այրվել է պահեստավորված 2 տոննա խոտը:

Հոկտեմբերի 21-ին Շիրակի մարզի Հացիկ գյուղում բռնկված հրդեհի հետեանքով այրվել են Դ. Հակոբյանին պատկանող անասնակերի պահեստի՝ 36 քմ մակերեսով տանիքը, հացատան՝ 6 քմ մակերեսով ծածկը, պահեստավորած 700 հակ խոտը եւ 1500 կգ աթաթը:

Նույն օրը Գեղարքունիքի մարզի Վահան գյուղում այրվել են Ա. Շուշանյանին պատկանող անասնագոմի՝ 50 քմ մակերեսով տանիքը եւ այնտեղ պահեստավորած կես տոննա անասնակերը, Վայոց ձորի մարզի Արեւի գյուղում՝ Լ. Գրիգորյանին պատկանող անասնագոմի՝ 20 քմ մակերեսով տանիքը եւ այնտեղ պահես-

տավորած 3 տոննա խոտը, Շիրակի մարզի Շիրակ գյուղի բնակիչ Գ. Հայրապետյանին պատկանող տան բակում՝ պահեստավորած 10 տոննա անասնակերը:

Խանութում

Հոկտեմբերի 21-ին Արթիկի Բաղրամյան 10ա հասցեում՝ «Արսեն եւ Գոհար» ՍՊԸ-ին պատկանող երկհարկանի խանութում բռնկված հրդեհի հետեանքով այրվել են առաջին հարկի սրահի պլաստմասսայե երեսպատումները, թղթա տարաները եւ հացաբովեղենի բաժինն ամբողջությամբ՝ 32 քմ մակերեսով:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 04.14-ին, մարվել՝ ժամը 05.15-ին:

Խորդանոցներ

Հոկտեմբերի 21-ին, ժամը 01.09-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեանի Պարոնյան փողոցի 15 շենքում:

Դեպքի վայր են մեկնել երկու մարտական հաշվարկ եւ մեկ ավտոսանդուղ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 02.02-ին, մարվել՝ ժամը 02.16-ին:

Այրվել են 4-րդ եւ 5-րդ հարկերի խորդանոցները՝ ընդհանուր 15 քմ մակերեսով:

» 3

իրավառությունների գործարանում տեղի ունեցած պայթյունի հետեանքով 18 մարդ է զոհվել:

Գործարանը տեղակայված է Ռաջաստիսան նահանգի Դիզի քաղաքի բնակելի թաղամասում:


Տեղական ոստիկանության ղեկավարի հավաստմամբ՝ պայթյունի հետեանքով 5 տուն փլուզվել է, զոհվածների մեջ կան նաեւ երեխաներ: Վիրավորվածներից 18-ը տեղափոխվել են քաղաքային հիվանդանոց:

Ի դեպ, հոկտեմբերի 28-ին Հնդկաստանում ավանդաբար նշվում է հրավառությամբ ուղեկցվող կրակե Դիվալի տոնակատարությունը: Ոչ ոք վստահ չէ, որ ինչպես Դիզիի դեպքում, արտադրողները՝ մեծ եկամտի ակնկալիքով այնտեղ նույնպես չեն խախտի անվտանգության սահմանված կանոնները:

Կալիֆոռնիան բոցերի մեջ

Չորեքշաբթի օրը Կալիֆոռնիայում մոտավորապես 100 հեկտար տարածք է այրվել: Զամու արագությունը կազմել է 48 կմ/ժամ: Ռանչո Կուլմանգայի լեռներում ներկա պահին կրակի դեմ 300 հրշեջ է պայքարում: Հրդեհաշիջման աշխատանքներում ընդգրկված են նաեւ ջրատար ինքնաթիռներ: Տեղի բնակիչները դեռևս չեն տարահանվել: Մոտավորապես 10 տան բնակիչներ, այնուամենայնիվ, ստիպված են լինելու լքել իրենց տները:

Ֆաինա Թյունիբայան



Նախճիր մեքսիկական բանտում

Մեքսիկայի հյուսիս-արեւելյան կալանավայրերից մեկում ծագած վեճի ժամանակ 21 բանտարկյալ է մահացել:

Զուգարանում ծավալված վիճաբանությունից հետո այնտեղ հրդեհ է բռնկվել:

Տեղական իշխանությունների հավաստմամբ՝ վիճաբանության պատճառը ազդեցության ոլորտների համար հանցագործների միջեւ ծավալված տեսական պայքարն է եղել: Մեքսիկական բանակի զինվորների եւ դաշնային ոստիկանության գործակալների համատեղ ուժերով կալանավայրում վերականգնվել է վերահսկողությունը: Ուղղիչ աշխատանքային կենտրոնում, որը նախատեսված է 1,5 հազար մարդու համար, ներկա պահին 2 հազար բանտարկյալ է պահվում:

Սելավ Նիկարագուայում

Նիկարագուայում ջրհեղեղի զոհ է դարձել 17 մարդ, 11 հազար բնակիչ տարահանվել է անվտանգ տարածք:

Վերջին օրերի ընթացքում տեղացած արեադարձային անձրեւների հետեանքով Նիկարագուայի 18 արվարձանային բնակավայրերից 11-ը հայտնվել են աղետի գոտում: Բնության «քմահաճությամբ» գետերում ջրերի մակարդակը մի քանի մետրով բարձրացել է:

Ավիավթարներ տարբեր կիսագնդերում

Ավստրիայի «Կոբրա» կոչվող Ահատոկ ոստիկանական ստորաբաժանման շտաբի շենքի վրա մարզական ինքնաթիռի տապալ-



ման հետեանքով երկու մարդ է զոհվել, բռնկվել է նաեւ շտաբի շենքի տանիքը:

Դեպքի վայրում հայտնաբերվել են օդաչուի եւ ուղեւորի այր-

ված մարմինները: Ոստիկաններից ոչ ոք չի տուժել: Հրդեհի մարումը ժամեր է տևել:

Պատահարը տեղի է ունեցել Վիենայից 50 կմ հեռավորության վրա գտնվող Վեներա օդանավակայանի մերձակայքում: Ենթադրաբար՝ ինքնաթիռը վթարվել է մառախուղի պատճառով, այն պահին, երբ օդաչուն փորձել է հասնել օդանավակայան: Հայտնի է նաեւ, որ ինքնաթիռը թռել էր Գերմանիայից:

Իսկ մյուս դեպքը տեղի է ունեցել երկրագնդի արեւմտյան կիսագնդում: Մեքսիկայի Սյուդադ դե Վիկտորիա քաղաքից ոչ հեռու կործանվել է «Սեսնա 310» մակնիշի փոքր մի ինքնաթիռ: Օդաչուն եւ չորս ուղեւորները զոհվել են: Ըստ նախնական տվյալների՝ թռիչքից անմիջապես հետո օդաչուն՝ տեղեկացնելով, որ ինքնաթիռում տեխնիկական անսարքություններ կան, որոշել է վերադառնալ օդանավակայան, սակայն... Ինքնաթիռը վայր է ընկել թռիչքուղուց 1,5 կմ հեռավորության վրա:

Դեպքի վայրում աշխատել են հրշեջներն ու փրկարարները: Ավիահղետի պատճառները պարզաբանվում են:

Ճանաչաատ գիշեր

Նախորդ գիշեր Ավստրալիայի

հարավ-արեւելյան Կվինսլենդ նահանգում տեղի է ունեցել անբնական ուժեղ մրրիկ, որի ժամանակ գրանցվել է կայծակի ավելի քան 11 հազար հարված: Ականատեսների վկայությամբ երկնքից թափվող կարկուտը՝ մեծությամբ գոլֆի գնդակ է հիշեցրել:

Օդերևութաբանական ծառայության տվյալների համաձայն՝ կայծակի ժամանակ քամու արագությունը կազմել է 100 կմ/ժամ: Փոթորիկը վնասել է էլեկտրական լարերի գծերը՝ 15 հազար բնակելի տան բնակիչների թողնելով առանց հոսանքի:

Մասնագետների դիտարկմամբ՝ այս արտասովոր երեւոյթն առաջացել է մթնոլորտային դաշտում տաք եւ սառը հոսանքների բախման հետեանքով: Առաջիկա օրերին, ըստ կանխատեսումների, տուժած շրջանում տեղումները շարունակվելու են:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ավստրալական բոլոր արագ արձագանքման ծառայություններն անցել են ուժեղացված աշխատանքային ռեժիմի: Փրկարարներին միացել են նաեւ հարյուրավոր կամավորներ:

Պայթյուն

Ազգահուության պատճառով Չորեքշաբթի գիշերը Հնդկաստանի արեւմուտքում գտնվող



« 2

Ինքնահրկիզում

Հոկտեմբերի 22-ին, ժամը 15.29-ին Երեւանի 1-03 ծառայությունից ահազանգ է ստացվել, որ Հանրապետության հրապարակում՝ «Արմենիա-Մարիոտ» հյուրանոցի մոտ, անծր չպարզված քաղաքացիի պատրաստվում է ինքնահրկիզման:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Մինչ հրջեջ-փրկարարների ժամանումը քաղաքացին ինքնահրկիզվել է եւ շտապօգնության բրիգադի կողմից տեղափոխվել քաղաքի Ճառագայթային բժշկության եւ այրվածքաբանության կենտրոն:

Ըստ բժիշկների՝ տուժած, Երեւանի Միքայելյան փողոցի 82 շենքի բնակիչ, 1971 թ. ծնված Արայիկ Մուրադյանը ստացել է 3-4-րդ կարգի այրվածքներ: Նրա առողջական վիճակը գնահատվում է ծանր:

ԼՂՀ ՓԾ

Նրառվական կենտրոն

Հայտնաբերվել է դիակ

Հոկտեմբերի 15-ին ԼՂՀ Զաշաթաղի շրջանի բնակչության եւ տարածքների բաժնի պետից ահազանգ է ստացվել, որ շրջանի Վազգենաշեն գյուղի բնակիչ, 1983 թ. ծնված Վ. Նազարյանը տնից դուրս է եկել եւ այլեւ չի վերադարձել:

Իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում հոկտեմբերի 17-ին Վ. Նազարյանի դին հայտնաբերվել է գյուղամերձ տարածքում:

Ջենք-գինամթերք

Հոկտեմբերի 17-ին Զաշաթաղի շրջանի Սոս գյուղի տարածքում հայտնաբերվել է 80 մմ-ոց հակատանկային արկի չպայթած գլխիկ:

Ձինամթերքը վնասագերծվել է:

Նաիրա Եղիազարյան

Հրդեհ բեռնալցակայանում



Այրվում էր բեռնալցակայանի վառելիք

Հոկտեմբերի 20-ին Մամիկոնյանց 44 հասցեում բռնկված հրդեհի մասին ահազանգը ստացվել էր ժամը 14.28-ին: Անմիջապես դեպքի վայր էր մեկնել երկու մարտական հաշվարկ, հրջեջ-փրկարարները տեղում էին եղել արդեն 14.33-ին: Հրդեհը «Վեկո» բեռնալցակայանում էր: Այրվում էր հեղուկ վառելիք պարունակող երեք տարա: Դրանցից մեկում 3 տոննա դիզելային վառելիք էր, մյուսներից ամեն մեկում՝ 6-7 տ բեռնիկ:

Ինչպես բեռնալցակայանին կից շենքերի բնակիչներն էին պատմում, ուժեղ պայթյունի ձայն էին լսել, արդյունքում «տուժել էին» ոչ միայն բեռնալցակայանի ապակիներն, այլեւ հարակից շենքերի պատուհաններն ու մոտակայքում գտնվող մեկ մեքենա: Փողոցի՝ բեռնալցակայանին մոտ հատվածը ծածկված էր

փշրված ապակիով: «Շատ հզոր պայթյուն էր, ալիքի հարվածից վերեւի հարկերի պատուհանների ապակիները փշրվել են», - պատմում է Երեւանի քաղաքապետարանի շինվերանորոգման գրասենյակի աշխատակիցներից Մուրադ Մուրադյանը: Գրասենյակը բեռնալցակայանին մոտ շենքում է:

Պայթյունի վտանգ կար

- Բարդ հրդեհ էր, - ասում է հրդեհաշիջման ղեկավար Արթուր Հարությունյանը, երբ արդեն հրդեհի մեջը կտրվել էր, այսինքն՝ մեկուսացվել: - Առաջին հերթին, անհրաժեշտ էր հովացնել կրակը, քանի որ պայթյունի մեծ վտանգ կար: Հայտարարվեց բարձր կանչ, եւ տեղում աշխատում է տասը մարտական հաշվարկ՝ երկու շարժասանդուղք, մեկ ջրատար եւ յոթ հրջեջ մեքենա: » 7

սեյսմիկ պաշտպանություն

Հոկտեմբերի 16-22-ը ՍՊՍԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում գրանցել են 3 բալ եւ ավելի ուժգնությամբ մեկ թույլ երկրաշարժ: Երեք բալանոց սեյսմիկ ցնցումը տեղի է ունեցել հոկտեմբերի 22-ին, Արմավիր քաղաքից 12 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանում. գրանցվել է 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկու երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել Վրաստանի տարածքում: Երեք բալ ուժգնությամբ ստորգետնյա ցնցումները գրանցվել են Դնանիսի քաղաքից 38 կմ արեւմուտք եւ 23 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. գրանցվել է 6 եւ ավելի մագնիտուդով երեք ուժեղ երկրաշարժ: Դրանք տեղի են ունեցել խաղաղովկանոսյան օղակաձեւ գոտում: Հոկտեմբերի 16-ին Մեքսիկայի հարավային ափամերձ հատվածում՝ Գվատեմալայի սահմանամերձ մասում, գրանցվել է 6,6 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Ստորգետնյա ցնցումները գրանցվել են մեքսիկական Չիապաս նահանգում, ինչպես նաեւ Գվատեմալայի մայրաքաղաք Գվատեմալայում: Հոկտեմբերի 19-ին 6,9 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել Խաղաղ օվկիանոսի հարավ-արեւմտյան շրջանում՝ Տոնգայի մայրաքաղաք Նուկուալոֆայից 160 կմ հարավ-արեւելք: Երկրաշարժը ցունամի չի առաջացրել: Ստորգետնյա ցնցումները գրանցվել են մայրաքաղաքի բնակիչների կողմից՝ 2 րոպե տևողությամբ: Երեք օր անց՝ հոկտեմբերի 22-ին, նույն օջախային գոտում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որն ունեցել է 6,4 մագնիտուդ: Հոկտեմբերի եւ ավերածությունների մասին տեղեկություն չկա:

ՍՊՍԾ գործակալություն

շտապօգնություն 1-03 Երևան

Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 3034 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 399 մարդ: Եղել է մանկական 224 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 53 երեխա: Գրանցվել են 24 մահ եւ 16 դժբախտ պատահար:

Հոկտեմբերի 16

Մեղիկից թունավորումով թիվ 2 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել Նոր Նորքի 4-րդ զանգվածի 27 շենքի բնակիչ, 3-ամյա Ի. Բաբուշկինան: Դեղորայքային թունավորումով «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն է տեղափոխվել 36-ամյա Կ. Մեսրոպյանը:

Օձի խայթոցով հիվանդանոց է տեղափոխվել 13-ամյա Գ. Վարդանյանը:

Հոկտեմբերի 17

«Մեսրոպյու» հյուրանոցի մոտ տեղի ունեցած վթարի հետևանքով 25-ամյա Ա. Գրիգորյանը ստացել է բազմակի վնասվածքներ եւ տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն:

Հոկտեմբերի 18

Թիվ 1 համալսարանական հիվանդանոցի մոտ վրաերթի է ենթարկվել 23-ամյա Զ. Իսահակյանը, որը գլխուղեղի ցնցումով տեղափոխվել է «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Դեղորայքային թունավորումով վերոնշյալ բժշկական կենտրոն է տեղափոխվել 15-ամյա Է. Թանյանը:

Գ. Նժդեհի 13 հասցեում բարձրությունից ընկել եւ բազմակի վնասվածքներով «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել 30-ամյա Զ. Զաքարյանը:

Հոկտեմբերի 19

Լենինգրայան փողոցում տեղի ունեցած վթարից տուժել եւ աջ ձեռքի սալջարդով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել 21-ամյա Ն. Բաղդասարյանը:

Հոկտեմբերի 20

Նոր Նորքի 9-րդ զանգվածի 25 շենքի 8-րդ հարկից ընկել եւ մահացել է մի տղամարդ, իսկ ևսորենացու փողոցում բարձրությունից ընկած 34-ամյա Գ. Հովհաննիսյանը տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Խանջյան փողոցում դանա-

կահարվել են 15-ամյա Զ. Մարտիրոսյանը եւ 16-ամյա Լ. Դավթյանը, որոնք կտրած-ծակած վերքերով տեղափոխվել են թիվ 3 կլինիկական հիվանդանոց:

Դեղորայքային թունավորումով «Ար. Աստվածամայր» բժշկական կենտրոն է տեղափոխվել Դավթաշեն թաղամասի 8 հասցեում բնակվող 6-ամյա Դ. Մաթեոսյանը:

Հոկտեմբերի 21

Էլեկտրահարումից ստացած դեմքի, դաստակների 1-2-րդ կարգի այրվածքներով Կոմիտասի 56 հասցեից այրվածքների կենտրոն է տեղափոխվել 43-ամյա Վ. Առաքելյանը:

Արամ Խաչատրյան փողոցում վրաերթի է ենթարկվել եւ գլխուղեղի ցնցումով «Արմենիա» բժշկական կենտրոն տեղափոխվել 70-ամյա մի կին:

Հոկտեմբերի 22

Մաշտոցի պողոտայի եւ Պուշկինի փողոցի խաչմերուկում վթարի է ենթարկվել 35-ամյա Վ. Մալարյանը, որը բազմակի կտրվածքներով տեղափոխվել է «Ար. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

եղանակի տեսություն

Հոկտեմբերի 16-19-ը առանձին շրջաններում դիտվել են տեղումներ մինչեւ 1-7 մմ (Մարտիկ՝ 14 մմ, Ստեփանակերտ՝ 21 մմ):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +22...+27, Լոռիում, Տավուշում եւ Սյունիքի նախալեռ-

ներում՝ +20...+25, Լեռնային շրջաններում՝ +15...+20 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ -2...+3 (Աշոցում՝ -6), Տավուշում՝ +2...+7, Սյունիքի նախալեռներում եւ Արարատյան դաշտում՝ +4...+9 (Սիսիանում՝ -1), Սյունիքի հովիտներում եւ Ար-

ցախում՝ +8...+12 °C:

Առաջիկայում առանձին շրջաններում սպասվում է անձրեւ: Զամին հյուսիս-արեւելյան՝ 3-8 մ/վրկ, 24-28-ը տեղ-տեղ հնարավոր է ուժգնացում՝ 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 25-ից ցածր կբարձրանա 2-3 աստիճանով, այնուհետեւ նույնքանով կնվազի:



Պատրաստ՝ արտակարգ իրավիճակներին

- « 1 Յրամանատա-րաշտաբային ուսումնավարժության մասնակիցներն էին.
- արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովը.
 - տարահանման հանձնաժողովը.
 - Երեւան քաղաքի փրկարարական վարչությունը եւ համայնքային բաժինները.
 - Ալիխանյանի անվան Երեւանի ֆիզիկայի ինստիտուտը.
 - ՀՀ ԱԻՆ ՀՓԾ հատուկ փրկարարական ջոկատը.
 - ՀՀ ԱԻՆ ՀՓԾ Երեւանի թիվ 7 հրշեջ փրկարարական ջոկատը.
 - ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունը.
 - «Սպիտակ» փրկարարական ջոկատը.
 - Հայկական կարմիր խաչի ընկերությունը.
 - Երեւանի թիվ 100 եւ 102 դպրոցները:

Ըստ ծրագրվածի՝ հոկտեմբերի 17-ին տեղական ժամանակով 08.00-ին գրանցվել է 7 բալ ուժգնությամբ երկրաշարժ, էպիկենտրոնը՝ Արմավիրի մարզում: Այն զգացվել է նաեւ Հայաստանի մի քանի բնակավայրերում: Վիճակը բարդ է հատկապես Երեւանի Աջափնյակ համայնքում: Ենթադրյալ երկրաշարժը տեւել է 8 վայրկյան, կան ավերածություններ, մարդկային զոհեր ու վիրավորներ:

Արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի նիստ

Առավոտյան ժամը 9-ին Երեւանի քաղաքապետարանում անցկացվում է Արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի նիստ: Մասնակցում են Երեւանի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամները, տարահանման հանձնաժողովի ղեկավարությունը: Ներկայացվում է իրավիճակը, մշակվում են համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման հարցերը:

«Դժվար էր ուսումնավարժանքն անցկացնել ողջ քաղաքի մասշտաբով, որպես օրինակ վերցրել ենք Աջափնյակ համայնքը: Իր տարածքով այն ամենախոցելի է: Բոլոր ծառայությունների հետ լուրջ աշխատանք է տարվել: Բոլորը պատրաստվել են, ստեղծված իրավիճակի պարզաբանումներով,

կոնկրետ իրավիճակային գործողություններով զեկույցները կան», - պարզաբանում է ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, ՀՓԾ տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանը:

«Նման միջոցառումների անցկացումը կարեւորում ենք,



երբեք չենք մոռանում, որ 1988-ին եղել է երկրաշարժ, որի հետեւանքները դեռ ամբողջությամբ վերացված չեն: Այսօրվա միջոցառումը պայմանավորված է նրանով, որ քաղաքապետարանը, համայնքները, բոլոր ծառայություններն առավելագույնս պատրաստ լինեն նման իրավիճակների», - հավելում է Երեւանի քաղաքապետ, ուսումնավարժության ղեկավար Երվանդ Զախարյանը:

Հրշեջ-փրկարարները Երեւանի ֆիզիկայի ինստիտուտում

Ծրագրված է, որ երկրաշարժի հետեւանքով հրդեհ է բռնկվել Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի առաջին եւ երկրորդ էլեկտրատեխնիկականներում: Դեպքի վայր են ժամանում հրշեջ-փրկարարները: Նրանք մեկուսացնում, ապա՝ հաշված թուփերի ընթացքում մարում են հրդեհը: Բռնկված հրդեհը, սակայն, միակ վտանգը չէ, որ նման իրավիճակում կարող է առաջանալ ինստիտուտի տարածքում: Հեղուկ ազոտական թթվի արտադրամասում իրականում հնարավոր է ազոտական թթվի արտանետում: Նման դեպքում փրկարարներից ու շտապօգնությունից բացի «գործին խառնվում են» փրկարար ծառայության քիմիական կենսաբանական լաբորատորիայի ուժերը:

Տեղադրվում է ջրային վարագույր՝ թունավոր գոլորշիների հետագա տարածումը կանխելու համար:

«Ջրի միջոցով գոլորշիները նստեցնում ենք, ջրային վարագույրը ստեղծվում է քամու ուղ-

ղությանը հակառակ, որպեսզի քամու հետ տարածվող գոլորշիները լուծվեն ջրի հետ: Դրանից հետո գոլորշիների թունավոր բաղադրությունը թուլանում է եւ դրանց հետագա տարածումն արդեն մեծ վտանգ չի ներկայացնում շրջապատի համար», - պարզաբանում է փրկա-

րար ուժերի վարչության պետի տեղակալ Պավել Գյոզայանը:

Հայտնաբերված տուժածներին տարահանում են:

Ինստիտուտին կից տեղակայված է բուժկետը, հենց որտեղ էլ ենթադրյալ երկրաշարժից հնարավոր տուժածներին օգնություն է ցուցաբերում Հայկական կարմիր խաչի ընկերությունը: Բուժկետի հարեանույթյամբ ժամանակավոր կառավարման կետն է: Ինչպես զեկույցում են՝ կապը թաղապետարանի, տարահանման ժամանակավոր կետերի եւ մյուս ծառայությունների հետ հաստատված է:

«Ուսումնավարժանքի նպատակն այն է, որ կառավարման տեսանկյունից կարողանանք հստակ համագործակցություն ապահովել: Սովորաբար աղետների ժամանակ շատ հարցեր, որոնց լուծումը սովորական պայմաններում դյուրին է, արտակարգ իրավիճակում հաճախ անլուծելի են դառնում: Հոգեբանական ճնշման ներքո մարդիկ հաճախ չեն կարողանում իրենց մեջ ուժ գտնել եւ որոշումներ կայացնել: Իսկ դա շատ կարեւոր է», - ասում է ՀՓԾ տնօրենի տեղակալ Վրեժ Գաբրիելյանը:

Շվեյցարական ՍՄԱԶ-ը որսում է անգամ 1/1000 բալ ուժգնությամբ ցնցումը

Ուսումնավարժանքին մասնակցում են նաեւ «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության» արագ արձագանքման ուժերը: Շվեյցարական ՍՄԱԶ կոչվող սարքով նրանք ուսումնասիրում են

հետցնցումային գործընթացը: Այդ սարքն իր տեսակով միակն է տարածաշրջանում: Գերզգայուն ՍՄԱԶ-ը որսում է երկրի ընդերքում գրանցվող 1/1000 բալից մինչեւ 9 բալ ուժգնությամբ ցնցումները: Սրանով հայ մասնագետներն աշխատել են Հնդկաստանում՝ 2001-ի ապրիլից երկրաշարժի ժամանակ:

«Հետցնցումային գործընթացն ուսումնասիրելը շատ կարեւոր է, որպեսզի պարզենք՝ երկրաշարժը սպառնե՞ց իր ուժը, թե՞ դեռ ուժեղ հարվածի հնարավորություն կա: Այսպիսի սարքերն օգտագործում ենք օպերատիվ խնդիրների համար: Եղավ երկրաշարժը, սարքը տեղադրում ենք էպիկենտրոնային գոտում եւ ուսումնասիրում ընդերքում գրանցվող ցնցումները», - պատմում է «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության» գործակալության դիտացանցի բաժնի պետ Վալերի Արզումանյանը:

Վրանային ավան

Աջափնյակի 102 դպրոցի շրջակայքն ընտրվել է որպես առավել անվտանգ տարածք: Այնտեղ է տեղակայվել վրանային ավանը, ուր տեղափոխում են հնարավոր տուժածներին եւ շրջակայքի անվնաս բնակիչներին: Ավանում է տարահանման ժամանակավոր տեղաբաշխման կետը, որտեղ էլ նրանք, նախ, գրանցվում են, ապա՝ տեղափոխվում վրաններ: Ավա-



նում բնակիչները ստանում են առաջին բժշկական եւ հոգեբանական օգնություն: Այստեղ գործում է նաեւ սննդի բաշխման կետ:

Հատուկ փրկարարական ջոկատը ցուցադրեց իր հնարավորությունները ընդամենը 30 տոկոսը

Շինարարների 23 հասցեում իր պատրաստակապությամբ աչքի ընկավ Հատուկ փրկարա-

րական ջոկատը: 17 փրկարարից կազմված խմբում աշխատում էին եւ լեռնափրկարարներ, եւ ընդհանուր պրոֆիլի փրկարարներ, կինոլոգիական ու առաջին բուժօգնության խմբեր:

Ըստ ծրագրվածի՝ երկրաշարժից փրկվել է շենքը, փլատակներում վիրավորներ կան: Սկզբում փրկված շենքի տարածք են մտնում կինոլոգները: Նրանց հետ է հատուկ որոնողահետախուզական աշխատանքների համար նախատեսված շունը՝ Թոմին:

«Թոմինին ֆրանսիացիներն են մեզ նվիրել, այն ժամանակ մեկ տարեկան էր, վարժեցրած չէր, ոչինչ չգիտեր: Հիմա արդեն 7 տարեկան է, իր գործում պրոֆեսիոնալ է, իրական արտակարգ իրավիճակներում՝ փորձված», - ասում է որոնողահետախուզական կինոլոգիական խմբի պետի տեղակալ Արմեն Ավետիսյանը:

Տուժածները հայտնաբերվում եւ փրկարարների օգնությամբ շենքից դուրս են բերվում:

Շենքից դուրս տուժել է մոտակայքում կայանած ավտոմեքենան, որի ներսում վարորդն է: Նրան այնտեղից դուրս բերելու համար անհրաժեշտ տեխնիկա եւս փրկարարներն ունեն:

«Այս գործողությունները մեր ջոկատի հնարավորությունների ընդամենը 30 տոկոսն էին: «Պահուստում» ունենք փրկարարական այլ

հնարքներ եւ գործիքներ եւս», - ամփոփում է Հատուկ փրկարարական ջոկատի հրամանատար Ավետիս Մանուկյանը:

Ուսումնավարժությունը տեւում է մեկ ժամից փոքր-ինչ ավելի: Արդյունքներն ամփոփվելու են 10-15 օրվա ընթացքում, իրականացվելու է կատարված աշխատանքի մանրամասն վերլուծություն:



Ապրելը պատասխանատվություն կրելն է

Ծնվել է 1954 թ. ապրիլի 12-ին, Կամոյի շրջանի Սարուխան գյուղում:
1975 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:



1994 թ.՝ իրավաբանական ֆակուլտետը:
1989 թ.՝ ԽՄԿԿ ԿԿ առընթեր հասարակական գիտությունների ակադեմիան (Մոսկվա):
1988 թ. ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղարն էր:
Այժմ ՀՀ սփյուռքի նախարարն է:
Անկուսակցական է: Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գավառի պետական համալսարանի պրոֆեսոր:
Պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով (1986 թ.):
2 գրքի եւ 26 գիտական հոդվածի հեղինակ է:

Պատմում է Յրանուշ Հակոբյանը

Կենտրոնի Բյուրոյի նիստն էր: Ժամը 11.41-ին պառլամենտի (ներկայիս Ազգային ժողովի) շենքը դողդաց, բոլոր տղամարդիկ վեր ցատկեցին, իսկ ես իմ տեղում կուչ եկա. վայրկյաններ անց հաջորդեց երկրորդ հարվածը, եւ մեզ թվաց, թե ամբողջ Երեւանը փլատակներում է: Անմիջապես վազեցինք դեպի հեռախոսները: Տեսնես ինչ եղավ ատոմակայանը, մտածեցի, Երիտասարդական պալատը, որը համարվում էր ամենաբարձր շենքը եւ այդ ժամանակ պատկանում էր մեզ՝ երիտասարդներին: Երբ հասկացանք, որ Երեւանին ոչինչ չի պատահել, սկսեցինք պարզել, թե որտեղին հարվածեց երկրաշարժը: Չինվորական կառույցներից մեզ հաղորդեցին, որ հանրապետության հյուսիս-արեւելքում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ:

միության կենտրոնի քարտուղարը մեզ հետ հեռախոսով կապ հաստատեց, ասաց, որ դպրոցները քանդվել են, երեխաներ են մնացել փլատակներում, կան հազարավոր զոհեր, եւ ամենասարսափելին այն էր, որ քիմկոմբինատից սկսվել էր քիմիական նյութի արտահոսք՝ առաջացնելով խուճապ: Այս ամենը լսելուց հետո անմիջապես որոշում ընդունեցինք, որ այդ ուղղությամբ անպայման բժշկական ինստիտուտի ուսանողներ պետք է մեկնեն. միակ կազմակերպված ուժն էին այդ պահին: Կարող էին եւ սառնասիրտ լինել, եւ առաջին օգնությունը ցույց տալ: Ես այսօր երախտագիտությամբ եմ հիշում այդ ուսանողների կատարած գործը:

Ամենակարեւոր քայլը, որ կատարեց Հայաստանի լեհիկայի կոմերիտմիության կոմիտեն՝ արյան հավաքման գործընթաց սկսելն էր:

Մենք ունեինք հազարավոր երիտասարդներ եւ մեր կազմակերպությունն այսօրվա փոքրփոքր երիտասարդական կազմակերպություններից չէր կազմված. 700 հազար հոգի էինք, իսկ որոշումները կատարվում էին բարեխղճորեն ու արագ: Կարողացանք հանրակացարանների բոլոր երիտասարդներին ուղի հանել եւ ստեղծել արյան բանկը: Հետագայում առողջապահության նախարարը խոստովանեց, որ իրեն զարմացրել էր այս ուշագրավ նախաձեռնությունը:

Ես խոսեցի Մոսկվայի՝ մեր ղեկավարության հետ, ներկայացրեցի ստեղծված իրավիճակը, ասացի, որ անհրաժեշտ են մեծ գումարներ: Անմիջապես մեզ հատկացրին 5 միլիոն ռուբլի: Հեռուստատեսությամբ հանդես եկա հայտարարությամբ՝ մենք ստեղծում էինք աղետի գոտու վերականգման ֆոնդ, երիտասարդությունը ներդրում էր

մեկ միլիոն ռուբլի: Հաջորդ կարեւոր քայլն այդ նույն գիշեր, տարբեր ճանապարհներով, բոլոր վիրավորներին Երեւան տեղափոխելն էր:

Նախ սկսեցինք իրականացնել տեղափոխման աշխատանքներ, որից հետո բոլոր վիրավորների անուններն էինք ձեռագրում. հարազատները, բարեկամները չգիտեին, թե որ հիվանդանոցում են նրանց տեղավորել: Հեռուստատեսությամբ անընդհատ հրապարակում էինք մեր ձեռքի տակ եղած տեղեկությունները, հնարավորինս նկարագրում իրավիճակը: Այս աշխատանքը լայն ընդգրկում ունեցավ, եւ մենք հասկացանք, որ պետք է լրջորեն զբաղվել տեղեկություններ հավաքելով եւ դրանք մարդկանց փոխանցելով: Շենքի ամբողջ ճակատով բոլոր վիրավոր մարդկանց անուն-ազգանուններն էինք բազմացրել ու փակցրել:

Երրորդ օրն ստեղծեցինք «Որոնում» ծառայությունը: Մենք կարողացանք շատ մեծ ծրագիր ստեղծել: Մեկ ամսվա ընթացքում 20 հազար մարդու գտանք եւ օգնեցինք:

Մեր մյուս կարեւոր քայլը հատկապես երեխաներին եւ կանանց օգնելն էր, որոնք փորձում էին գտնել հարազատներին, բարեկամներին կամ թեկուզ այն ամենն, ինչ մնացել էր իրենց իրերից: Բոլորին տեղափոխեցինք եւ տեղավորեցինք Երիտասարդական պալատում, «Ծիծեռնակ» ծամբարում, իսկ հետո եւ դիմեցի Ֆադեյ Սարգսյանին, որն այն ժամանակ մինիստրների խորհրդի նախագահն էր, եւ նա մեզ տրամադրեց հանրապետության բոլոր հանգստյան տները՝ Ծաղկածորի, Աղվերանի եւ այլն:

Երիտասարդներից որեւէ մեկը զլանար կամ ծուլություն աներ՝ նման դեպք չեմ հիշում: Բաժանվել ու տարբեր ուղղություններով, գիշեր-ցերեկ՝ 24 ժամ անընդմեջ, աշխատում էին: Նրանք Սպիտակում, Լենինականում, Կիրովականում ստեղծեցին շտաբներ եւ սկսեցինք արդեն տեղական շտաբների միջոցով ամբողջ գործունեությունը կառավարել: Հետագայում մենք ստեղծեցինք նաեւ շինարարական ջոկատներ, որոնց ուղարկեցինք վերականգնողական աշխատանքներին մասնակցելու:

Դեկտեմբերի 25-ից 31-ն աղետի գոտու երեխաներին հավաքեցինք տոնածառի շուրջը: Ձմեռ պապիների մի խումբ ստեղծեցինք: Տիկնիկային,

դրամատիկական թատրոնների, մշակույթի կենտրոնների դերասանները խնդրում էին, որպեսզի իրենք էլ ընդգրկվեն եւ գնան երեխաների մոտ: Չկար մեկը, որ պատրաստ չլիներ մեզ օգնելու:

Կամա-ակամա երիտասարդական այս կազմակերպությունը դարձավ անանուն եւ անպաշտոն շտաբ, կազմակերպող կենտրոն: Քանի որ մեզ վրա էինք վերցրել բեռը, բոլոր հարցերով մեզ էին դիմում, նույնիսկ սկսեցինք սննդի հարցերով զբաղվել: Այդ ժամանակ իրավիճակը, իրոք, ծանր էր, հացը «տալոնով» էր, Երեւանի խանութներում ոչինչ չկար, սննդի համար մարդիկ հազարներով հերթ էին կանգնում: Գումարի մի մասը, որը հատկացրել էր կոմերիտմիությունը, մենք անմիջապես բաժանեցինք ութ տարածքների միջեւ (այն ժամանակ Երեւանը 8 վարչական շրջան ուներ) եւ կարողացանք ուղիղ մեկ ամիս հազարավոր մարդկանց կերակրել:

Մտավորապես 500 հազար պտղատու եւ ոչ պտղատու ծա-

ղեպ, այդ օրերին լուրեր պտուղեցին, որ իբր երեխաներ են կորել: Ես հանձնարարեցի, որ գնան ու ստուգեն, թե օղանավերով ու գնացքներով քանի երեխա է մեկնել: Պարզվեց, որ լուրերը սուտ էին:

Մենք այսօր էլ խոսում, քննարկում ենք՝ արդյոք կարող էինք գոնե մասամբ խուսափել այդքան ծանր հետեւանքներից: Մտածելու բան կա:

Մեր կառավարման համակարգը օպերատիվ չէր: Կուսակցական կառույցները արագ չէին արձագանքում կամ կային պաշտոնատար անձինք (ցավոք, այսօր էլ կան), որոնք զգուշությունից, թե վախից, մինչեւ որեւէ քայլ ձեռնարկելու անպայման պետք է ամեն բան վերադասի հետ համաձայնեցնեին: Ըստ իս՝ աղետի պահին, արտակարգ իրավիճակներում պետք է կարողանալ շատ արագ որոշումներ կայացնել ու պատասխաններ տալ: Ցավոք, այդ ժամանակ մեր շատ ու շատ ղեկավարներ վախենում էին



ներ տնկեցինք եւ զոհվածների հիշատակին նվիրված պուրակներ ստեղծեցինք Սպիտակում, Լենինականում, Կիրովականում:

Մենք մարդկանց նաեւ միութենական առողջարաններում ու ծամբարներում տեղավորելու հնարավորություն ստացանք: Մեր ներկայացուցիչները մեկնեցին «Օռլյոնոկ», «Արտեկ» եւ այլուր, որտեղ տեղավորված էին տուժածները:

Շատ կարեւոր քայլ էր նաեւ փոքրիկների որոնման ծառայության ստեղծումը: Հիվանդանոցներում երեխաներից շատերը չէին կարողանում իրենց անուն-ազգանունն ասել. ո՞վ ես, որտեղից ես... Մենք մտածեցինք, որ անպայման պետք է նրանց նկարներ եւ նկարները փակցնենք մեր պատուհաններին, որպեսզի ծնողները գան ու գտնեն իրենց երեխաներին: Ի

պատասխանատվությունից: Հիշում եմ, երբ ես դիմեցի ղեկավարներից մեկին՝ սննդի կազմակերպման, մարդկանց տեղավորման հարցերով, նա ինձ նախատեց, թե ինչ իրավունք ունեն ամբողջ աղետի գոտին դատարկելու եւ բերելու Երեւան: Նրանք կարողանում էին անհավատալի ու անհասկանալի արտահայտություններ անել:

Խորհրդային Միության ժամանակներում, կարծես թե մեր մտքով անգամ չէր անցնում, որ մի օր կարող է բնական աղետն այդպես ցնցել երկիրը:

Մեր տարածաշրջանը գտնվում է վտանգավոր գոտում, մենք ապրում էինք այստեղ ու երկրաշարժը, փաստորեն, անպատրաստ դիմավորեցինք:

Այդ դասը չէինք անցել:

Շարունակելի



1.

Քուռը բացվեց եւ ներս «մտավ...»

Բառեր կարդալիս առաջ ընկնելու սովորություն ունեցողի միտքն ինչ ճանապարհ կկտորի, հատկապես եթե իմանա, որ բնագրում առկա է նաեւ «հանկարծ» բառը: «Հանկարծ դուռը բացվեց եւ...»: Առհասարակ, հանկարծակի բացված դռներից ով ասես կարող է ներս մտնել: Ներառյալ՝ սատանան: Թեպետ... նա էրբ է «բացառյալ» եղել որ:

Տեսնես ու՞ր կտանի այն գիրը, որի մեջ հայտնված հենց առաջին շնչավորը սատանան եղավ:

Այդուհանդերձ, սկզբի նախադասությունն ինձ ուրիշ բան հիշեցրեց. ժամանակին Այստեղերում բավական տարածված ու ընթերցվող թերթի վերջին էջի սրախոսություններից մեկը. «Ինչու՞, երբ Իվանովը գրում է՝ հանկարծ դուռը բացվեց եւ ներս մտավ կինս՝ չեմ հավատում, իսկ երբ Գոգոլը գրում է՝ հանկարծ դուռը բացվեց եւ ներս մտավ սատանան՝ հավատում եմ»: Սա՛ նկատի ունեի՝ բնագիրը ասելով:

Առաջին նախադասության մեջ, իրականում, ներս մտնողի խնդիրը չէ, որ դրված էր: Ուղղակի պատմությունը դռներով սկսելը ձիշտ է, որովհետեւ պատմությունը հենց դռներից էլ սկսվել է: Այնտեղ՝ Սկզբում, երբ դեռ պարզ էլ չէր, որ ամբողջ ապագան կոչվելու է պատմություն, եղել են դռներ, որոնց բացվելու պատկերը բավական անորոշ է, ի դեպ, իսկ փակվելը...: Պատմությունն, իրականում, սկսվել է հենց դռների փակումով: Առաջին դռներից այսպիսով՝ դրսում մնացածն է պատմությունը: Կարելի է ձեռնաց եզրակացնել, թե, ուրեմն՝ պատմությունը դուրսն է, որ կա, բայց լավ կլինի՝ չանելք, որպեսզի ստիպված չլինենք փնտրել «Իսկ ներսը» հարցի պատասխանը:

Ինչեւէ, դռները փակվեցին: Մարդուն դա դուր չէկավ, ըստ երեւույթին: Ահա եւ նա դարձավ դռներ բախող: Նաեւ՝ բացող, իհարկե: Իսկն ասած՝ արածը հենց միայն դա է եղել. բախել է ու բացել, բախել ու բացել, հաճախ բացել է առանց բախելու, առավել հաճախ՝ ջարդուփշուր է արել դուռ հիշեցնող ամեն ինչ, եւ մի առանձնակի կրքով՝ նրանք, որոնց վրա արգելանքներ են եղել, կյանքում պատահող բան՝ ասենք, ժամանակի արգելանքը:

Անընդհատ, որպես թե ետդարձական մոլորական մեջ, մարդը կրկնում ու կրկնում է մի անգամ արդեն արածը, եւ այդ կրկնության անունը դնում է «կյանք», ինքն իրեն հավատացնելով, թե ապրում է: Ստույգ՝ հաղթահարում: Բայց՝ արգելանքն են հաղթահարում: Ուրեմն՝ կյանքը սիրով ու հաղթահարելու պայմանով մարդուն տրամադրված արգելանք է...»:

Թե ինչու իր հայացքը կանգ առավ ինչ-որ անցյալում գրված այս տեքստի վրա, Սյորենը չէր կարողանում բացատրել: Ստույգ՝ բացատրություն առաջարկող, դեռեւս կիսատ-պաշտ



իր իսկ մտքերն ինքնաբերաբար վանվում էին ասես: Կամ առժամանակ մոլորում էին դեպի մի անկյուն, պահեստավորվում էին: Գրավորը տեքստն էր այդ պահին: Այդուհանդերձ, դրսում իքս թվականն էր եւ... Ժամանակը դրսում գետնընկելու սովորությունը ակնհայտ վրիպում է, ըստ երեւույթին, իսկ պատճառն՝ այն պատկերացումը, թե մեզ տեղավորել են ժամանակի մեջ, ինչպես որեւէ կառուցյալ, ասենք՝ տան մեջ կտեղավորելին: Գուցե հակառակն է իրականություն, եւ ժամանակն է տեղավորված մեր մեջ... Ինչեւէ, իքս թվականն էր, եւ վաղուց արդեն մի տասնամյակը մյուսին որեւէ կերպ առնչելու համար մարդիկ հատուկ դասընթացներ պիտի անցնեին: Խելամտության բոլոր սահմանները խախտած այս արագությունները եւ... ինչ-որ անցյալ: Գրեթե նախնադար:

Եվ ինչ արագության մասին ենք խոսում, երբ դա ավելի շատ նման էր դեպի բուն հատակը տանող գահավեժ ընթացքի: Զոռեւտության հետ եզրեր փնտրելու հարկ չկա, պատկեր է ընդամենը. պարզապես դեպի ներքե ավելի արագ կարելի է սլանալ, քան հակառակը՝ դեպի վեր: Մի հարյուր տարի առաջ,

երբ դեռ բանաստեղծներ կային, նրանցից մեկն ահա նկատել էր. մարդկության գնացքի արագության մասին խոսելն այլեւս անիմաստ է, այդ գնացքը գծերից դուրս է եկել...

Առավել եւս, ինչ էր փնտրում նախնադարում:

Այդ «աղբանոցը» մտնելու պատճառն ամենեւին պարապությունը չէր: «Աղբանոցը» իր բառն էր: Այդպես էր նա անվանում քումփյութերի արխիվներից մեկը, որը հետաքրքրում էր միմիայն փոքրաթիվ մասնագետներին ու գուցե նաեւ նրա վիճակում հայտնվածներին. Գլխավոր խորհրդին կից Փորձագետների Կենտրոնը, որի կազմում ընդամենը մեկ շաբաթ առաջ ընդգրկել էին նաեւ իրեն, շուտով պիտի ներկայացնեին վերջին տասնամյակի ամենակարեւոր եզրակացությունը... Իրադրությունը սովորական չէր: Բոլորը գերլարված էին: Սյորենն՝ առավել եւս: Իրեն գոնե այդպես էր թվում: Չեմ շտապում արդյոք: Բոլոր փաստերն են հաշվի առնված, եւ պատշաճ է, առհասարակ, նման դեպքերում փաստերից խոսելը: Ինչ էին տվել մարդկությանը իրենց նախորդ եզրակացությունները, որոնց հիման վրա նաեւ՝ Գլխավոր խորհրդի կայացրած մի քանի Որոշումները իսպառ փոխել էին մոլորակի դեմքը: Մեր հարազատ մոլորակի, որն, արդեն ահա տասնհինգ տարի, Մեծ Արջի Ղեկավարության հատուկ հրահանգով, մտցված էր Արտակարգ Մոլորակների ցուցակի մեջ: Ձիշտ է, առանձնապես չէին խառնվում այստեղի գործերին, առայժմ հիմնականում սեւեռուն հետեւում էին, բայց թե մինչեւ երբ էր այդպես լինելու, ոչ ոք չգիտեր: Պարզ էր միայն, որ այդ «երբը» կախված էր այստեղ կայացվող Որոշումներից:

Սյորենը Փորձագետներից ամենակրտսերն էր՝ 40 տարեկան: Մի կողմից՝ դա կարելի է տարիք չհամարել: Բայց եթե քո 25-ը դեռ չըրացած՝ աշխարհը հայտարարում է քառաչափ տարածություն տեղափոխվելու մասին, հիմնովին փոխում թվերի ընկալումը, ապա տարիներից, քո եւ մյուսների տարիքից գլոխ հանելն առհասարակ դառնում է գրեթե անհնարին:

Սյորենին միշտ թվացել էր, թե Փորձագետների կազմում ինքը պատահաբար էր հայտնվել, թեպետ վաղուց արդեն ծիծաղելի էր պատահականություններից խոսելը, դրանց ոչ ոք չէր հավատում: Գլխավոր ու

երկրորդական բոլոր պատահականությունները բացատրված էին, այդ բացատրություններից հիմնականները, կես առ կես, դպրոցական ուզածը դասագրքում կարող էիր գտնել: Ուրեմն՝ ինչն էր պատճառը: Պատասխանը ծնվում էր ինքնաբերաբար՝ պատճառը հենց ինքն էր: Իր բնավորությունը, մտածելակերպը, մարդկային տեսակը: Իր էությունը՝ մի խոսքով: Փորձագետների կազմում իր դերը հակակշռելն էր: Ինքը հակակշռել էր: Մյուս 8 հոգին, կյանքի փորձով ու հիմնավոր գիտելիքներով պաշարով զինված, իրենք իրենց բոլոր հարցերը հարցրած ու բոլոր պատասխանները պատասխանած պատկառազուրկ այրեր, ոչ թե Սյորենի նմանի կարիքն զգում էին, այլ պարզապես դա եւս մի հաշվարկի արդյունք էր. նրանք գիտեին, որ առանց նման մեկի ոչ մի կենտրոն, հանձնաժողով, անգամ ակունք գոյության իրավունք չունի եւ վերջ: Դա օրենք էր, կանոն էր, սահմանադրության կես էր: Պիտի լինեի մեկը, որ ուզածը հարցի միանգամից չի պատասխանում, որ կասկածում է, որ փնտրում է: Իհարկե, միշտ էլ դժվար է եղել այդպիսի մարդ գտնելը, իսկ հիմա՝ առավել եւս...

Ժամանակ, ժամանակ չկար: Կասկածելու ժամանակ չկար: Ժամանակը չէր հերիքում: Պատկերացրեք հապա՝ հանկարծ ու բոլորն սկսում են կասկածել ու մտածել... Ոչ մի որոշում չի կայացվում, ոչ մի առաջընթաց չի արձանագրվում: Ինչպիսի մոլորակ էինք ունենալու:

Նման նկատառումներից դրդված էլ՝ Սյորենի տեսակը անհրաժեշտություն էր համարվում՝ օրենքի տառին հավատարիմ:

Ահա եւ իր գործին էր: Տառապում էր: Պատասխան էր դրոնում: Բայց որտեղ է պատասխանը: Ինչ պատասխան կարելի էր գտնել այդ հին տեքստում: Ո՞վ էր եղել դրա հեղինակը: Թեպետ... դա նշանակություն չուներ էլ, այդպիսի գրություններով լիքն էր «աղբանոցը»:

«...կյանքը հաղթահարելու պայմանով մարդուն տրամադրված արգելանք է...»:

Տրամադրված... տեղին է այս բառը: Գեղամնք է, թե ինչ որ ակնարկ... Ինչ կա շարունակության մեջ.

«Սիրով, երեւի սիրով, որովհետեւ ատելությամբ տալու փոխարեն կարելի էր պարզապես

չտալ, եւ երկրորդ՝ ինչպե՛ս եւ ատելությունը համատեղելու գեղագիտության հետ. գեղագիտությունը որոշիչ է: Ձիշտ ինչպես ատելությունը: Կամ գեղագիտություն, կամ ատելություն, երրորդը չկա: Երրորդը մարդկանց աշխարհն է, որտեղ ամեն ինչ հնարավոր է: Օրինակ՝ գեղագիտական ատելություն, այսինքն՝ ատելություն՝ գեղագիտության մակարդակի հասցված: Գուցե՝ գեղագետի ատելությունը: Բայց առավել հասկանալի «ատելի գեղագիտությունն» է, եւ, ահա այսքան անիմաստ բառախաղը, որ միշտ կիսատ է մնում. գեղագիտությունը պարտադրում է չափունակել... Այլ խոսքով՝ ընտրել ուրիշ շարունակություն: Ուրիշ շարունակությունը ի՞նչ է, ուրիշը նոր սկիզբն է, որն ամբողջ նախորդը կհամարի սեւագրություն:

Գտնվեց:

Նեմզում եմ: Ուզում եմ ցույց տալ, թե հենց այս պահին էր, որ այդ բառը ջրի երես ելավ: Այդպես չէ: Իրականում, այ սա իսկապես նոր եմ հասկանում, «սեւագրությունն» ինձ ուղեկցել է ամբողջ կյանքում: Ես, առհասարակ, որեւէ բան սկսել եմ հասկանալ այդ բառը միս ու արյունով ընկալելու պահից:

Դա, ուրեմն, իմ բառն է, իմ նշանը: Իմ կերպը: Բառն աննշան մի բան չէ: Մարդն ունենում է իր աստղը, իր գույնը, իր քարը: Մարդն իր բառն էլ ունի, եւ բառն ավելի անձայր ու անհուն է, քան աստղը, քարը, գույնը: Բառն այնքան է մեծ, որ կարող է համեմատվել նաեւ բախվող դրան հետ, ավելին՝ համընկնել նրան: Սեւագրությունը իմ բախած դուռն է, այսինքն: Իսկ ով բախում է...:

Երբվանից սկսեցի այդպես մտածել: Չեմ հիշում: Որովհետեւ դա կարեւոր չէ այլեւս: Որովհետեւ սեւագրությունն ինքը կարեւոր բան չէ, նույնիսկ եթե այդ սեւագրությունն իմ կյանքն է:

Կարծես անվերջ նշումներ եմ արել, որոնք երբեւէ պիտի ամբողջացնեի՝ դարձնելով միաձուլ մի տեքստ՝ մեկ նպատակի մղված...»:

Միտքը կիսատ մնաց, քումփյութերի էկրանի վերին աջ անկյունում հայտնվեց կնոջ դեմքը:

Բարեւ, սիրելիս...

«Իսկական գեղեցկուհի է անաստվածը», - հասցրեց մտածել Սյորենը:

Շարունակելի



Առաջին հրշեջ խումբը, մարտական հաշվարկը

Լուսանկարներ, որոնք փոխել են աշխարհը

Այս լուսանկարի հեղինակ Քեփին Քարթերը՝ 1994 թվականին արժանանում է Պուլիտցերյան մրցանակի: Այս պարզեղ շնորհվում է Միացյալ Նահանգներում՝ գրականության, լրագրության, երաժշտության և թատրոնի ասպարեզում ունեցած հաջողությունների համար: Այն հիմնադրել է մամուլի ոլորտի խոշոր մագնատ, ծագումով հունգարացի Ջոզեֆ Պուլիտցերը: 1911 թ. նրա մահից հետո, մագնատի կտակի համաձայն՝ հիմնվում է Պուլիտցերի անվան հիմնադրամ, որի հաշվին է փոխանցվում այդ նպատա-

կոնդորն անհամբեր դրան է սպասում: Այս լուսանկարը ցնցել էր ողջ քաղաքակիրթ աշխարհը: Սուղանցի փոքրիկի մասին ոչ ոք ոչինչ չգիտեր, նույնիսկ լուսանկարիչը: Նա ընդամենը նկարել էր նրան, իսկ հետո հեռու ըջել գիշանգոյին ու սպասել մինչև փոքրիկը հեռանա: Քեփին Քարթերը 4 լուսանկարիչներից կազմված «Բենգ Բենգ» ակումբի անդամ էր, որոնք ճանապարհորդում էին Աֆրիկայով ու լուսանկարների համար սենսացիոն թեմաներ փնտրում: Քարթերին դա հաջողվում է: Սակայն երբ նրան հարց-



կի համար հատկացված երկու միլիոն դոլարը: 1917 թ. մրցանակը դառնում է ամենամյա: Մրցանակաբաշխությունն անցկացվում է Նյու Յորքում: Այն շնորհում են Կոլումբիայի համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամները: Պարգևավճարը 10 հազար ամերիկյան դոլար է: Եկարում պատկերված է սովից կծկված սուղանցի մի փոքրիկ աղջնակ: Նա, ամենայն հավանականությամբ, շոտով կմահանա: Նրա հետեւում ծվարած հսկա

նում են, թե արդյոք ինքն այդ փոքրիկին սննդի բաշխման կետ չի ուղեկցել, լուսանկարիչը պատասխանում է, որ ինքն ընդամենը փաստավավերագրող է, իսկ օգնություն ցույց տալն իր պարտականությունների մեջ չի մտնում: Մարդիկ այդ մասին իմանալով խոր հիասթափություն են ապրում: Ընթերցողները երես են թեքում նրանից: Մրցանակ ստանալուց երկու ամիս անց Քարթերն ինքնասպան է լինում:

1925 թվականի հոկտեմբերի 20-ին Երեւանի քաղաքային խորհրդի որոշմամբ Հայաստանի մայրաքաղաքում առաջին անգամ ստեղծվեց իսկական պրոֆեսիոնալ հրշեջ խումբ:



1920 թվականի հուլիսի 12-ին ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշում է ընդունում «Հրշեջ գործը ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի մեջ կենտրոնացնելու մասին»: Այնուհետև, 1921 թվականից հետո, ներքին գործերի ժողովուրդում ստեղծվում է հրդեհների դեմ պայքարի հատուկ հանձնաժողով, որը հրշեջ հսկողության մարմինների միջոցով իրականացնում է արդյունաբերական ձեռնարկությունների հակահրդեհային վիճակի հետազոտություն: Նման հանձնաժողովներ են ստեղծվում նաև միութենական հանրապետություններում՝ «Հրշեջ եռյակ» անվանումով:

ներների տանը կից ստեղծվում է երկրորդ կամավոր հրշեջ խմբակը, որտեղ ընդգրկվում են լավագույն 18 մարզիկները: Խմբակի ղեկավարը Բաթումից Երեւան վերադարձած հրշեջ Յուլյա Մեյյանն էր: Սրանից մեկ ամիս անց պիոներների տանը կազմակերպվում է եւս մեկ կամավոր հրշեջ խմբակ՝ բաղկացած 10 պիոներ-ջոկատավարից: Խմբակի անդամներն էին՝ Յուլյա Մեյյանը (պետ), Արմենակ Շեկոյանը (հետագայում՝ ՀՍՍՀ ֆինանսների մինիստր), Մարտին Չատինյանը (հետագայում՝ ՀԿԿ Կենտկոմի կից կուսպրոցի դիրեկտոր), Աշոտ Զիգյանը (հետագայում՝ գիտաշխատող), Լեւոն Գեորգյանը (հետագայում՝ բժիշկ), Անդրանիկ Շողեյրյանը (հետագայում՝ հացամթերումների պետական կոմիտեի նախագահի տեղակալ), Արտեմ Բոչարյանը, Միքայել Նալբանդյանը, Վաղինակ Սահակյանը եւ Լեւոն Մնացականյանը:

օրվա պահանջներից եւ չէին կարողանում անհրաժեշտ մակարդակով կատարել հրդեհների մարման աշխատանքները: Հրշեջ պահպանության գործը պատշաճ հիմքերի վրա դնելու նպատակով՝ 1925 թվականի հոկտեմբերի 20-ին Երեւանի քաղաքային խորհրդի որոշմամբ Հայաստանի մայրաքաղաքում առաջին անգամ ստեղծվեց իսկական պրոֆեսիոնալ հրշեջ խումբ: Հենց այս տարեթիվն էլ համարվում է Հայաստանի հրշեջ պահպանության հիմնադրման օր:

Արդյունաբերական ձեռնարկություններում սկսվում է պրոֆեսիոնալ հրշեջ խմբակների կազմակերպումը, իսկ քաղաքներում ու գյուղերում երեսն են գալիս կամավոր հրշեջ խմբակներ: Կրակի դեմ մղվող պայքարը, երկրի համաժողովրդական սեփականությունը եւ քաղաքացիների անձնական ունեցվածքը հրդեհներից պաշտպանելը դառնում են պատվավոր գործ:

Սակայն կամավոր հրշեջ խմբակներն իրենց փոքրաթիվ անձնակազմով եւ պարզունակ տեխնիկայով հետ էին մնում

1925 թվականի դեկտեմբերի 1-ին հրշեջ խումբը ՀԼԿԵՄ Կենտկոմի ղեկավարումից հանվում է եւ հանձնվում Երեւանի քաղաքային ենթակայությանը: Խմբի ղեկավար կազմում կատարվում է որոշ փոփոխություն. խմբի պետ է նշանակվում Թեմիլիսից Հայաստան վերադարձած Մկրտիչ Ավագյանը, տեղակալ՝ Յուլյա Մեյյանը: Այդ ժամանակ հրշեջ խումբը ստանում է «Ֆիատ» մակնիշի մեկ հրշեջ ավտոմեքենա եւ ստեղծվում է մարտական հաշվարկ:

Հոկտեմբերի 24-ը ՄԱԿ-ի միջազգային օրն է

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) պաշտոնապես ստեղծվել է 1945 թ. հոկտեմբերի 24-ին: 1971 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան որոշում է ընդունում, որով հրահանգում է անդամ պետություններին՝ այդ օրը նշել որպես պետական տոն: ՄԱԿ անունն առաջարկել է ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը: ՄԱԿ-ի «նախահայրը» Ազգերի լիգան էր, որը հիմնադրվել է 1919 թվականին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ Վերսալյան պայմանագրի համաձայն: Ազգերի լիգան նպատակ ուներ խթանել ժողովուրդների միջև համագործակցությունը եւ ապահովել խաղաղությունն ու անվտանգությունը: Աշխարհի շատ երկրներում հոկտեմբերի 24-ին կազմակերպ-

վում են ՄԱԿ-ի նպատակներին ու նվաճումներին նվիրված հանդիպումներ, քննարկումներ ու ցուցահանդեսներ: Գլխավոր քարտուղարի խոսքերով՝ մոլորակի գրեթե բոլոր անկյուններում ՄԱԿ-ը դարձել է հույսի կենդանի մարմնացում: Բազմաթիվ մարդկանց գիտակցության մեջ Միավորված ազգերի կազմակերպությունը խորհրդանշում է մի կառույց, որն ունակ է վերջ տալ բռնություններին ու սերմանել հանդուրժողականություն, նպաստել զարգացմանը եւ ապահովել հավասարություն, պաշտպանել մարդու իրավունքներն ու նվազեցնել աղքատությունը: Ներկայումս ՄԱԿ-ը 192 անդամ-երկիր ունի: Հայաստանը Միավորված ազգերի կազմակերպության անդամ է դարձել 1992 թ. մարտի 2-ին:

« 3 Տեղում աշխատող հրշեջ մեքենաներից երկուսը Փրկարար ծառայության ստացած նոր ԿամԱԶ-ներից են: Հիշեցնենք, որ դրանք նախատեսված են հիմնականում խոշոր հրդեհների համար: - Եվ ջուրը, եւ փրփրահեղուկը դրանցում ավելի շատ են: Պատ-

վարը, չեն ունեցել: Տեղում եղել է 12 տոննա տարողությամբ ջրատարը, դրանից բացի՝ ջուր բերել են բենզալցակայանին ամենամոտ գործող հիդրանտից: Այդուհանդերձ, Արթուր Հարությունյանը նկատում է, որ կարելի էր ավելի արդյունավետ աշխատել, եթե գործեր բենզալցա-



Կրակը ծածկվեց փրփուրով

Կրակը մեկուսացնելուց 43 րոպե անց միայն հրշեջներին հաջողվեց այն մարել: Այրվող վառելիքից դուրս եկող կրակը մարելու համար նրանք օգտագործեցին փրփրահեղուկ: Հրդեհի հետեւանքով այրվել էր մոտ տասը տոննա հեղուկ վառելիք եւ 3 քմ տարածք՝ հարակից կիսակառույց շինության տանիքից: Զոհեր եւ վիրավորներ չեն եղել: Թե իրականում ինչից էր բռնկվել հրդեհը, կպարզի հետաքննությունը:

Հրդեհ բենզալցակայանում

կերավոր ասած, այդ ԿամԱԶ-ներից յուրաքանչյուրը երեք ԶԻԼ-ի գործ է անում: Ինչ խոսք, նոր ստացած այդ մեքենաները հրդեհաշիջման աշխատանքին ավելի են նպաստում», - նկատում է Արթուր Հարությունյանը: Ավելի քան երկու ժամ հրշեջ-փրկարարները պայքարում էին կրակի դեմ: Միայն 16.45-ին նրանց հաջողվեց հրդեհը մեկուսացնել: Ջրի խնդիր, ինչպես ասում է հրդեհաշիջման ղեկա-

կայանին ավելի մոտ եղած հիդրանտը: - Դա լուրջ խնդիր է: Քաղաքում եղած հիդրանտների մեծ մասը չի գործում, տվյալ դեպքում բենզալցակայանին ամենամոտ հիդրանտը բավական հեռու է, այլապես «մայրուղի» կփռեինք եւ հիդրանտից ջուրը մեքենաներով տեղափոխելու կարիք չէր առաջանա», - իր մտահոգությունն է հայտնում հրդեհաշիջման ղեկավարը:



արտակարգ ժամանց

Կենդանիների աշխարհում

Ձին օդափոխման համակարգում

Օրերից մի օր Սերբիայի հարավում գտնվող Պրոկուպլե փոքրիկ քաղաքի բարձրահարկ շենքերից մեկի բնակիչներն ահագանգում են ոստիկանություն եւ հայտնում, որ իրենց շենքի օդա-

փոխման համակարգից սարսափելի տհաճ հոտ է գալիս: Դեպքի վայր հասած իրավապահ մարմինների աշխատակիցները որոշում են տարահանել շենքի բնակիչներին՝ ենթադրելով, որ այդ հոտը կարող է թունավոր գազերի արտանետման հետեանք լինել: Հետագայում ոստիկաններից մե-

կը պատմում էր. «Հոտն իսկապես սարսափելի էր: Սկզբում մենք չէինք պատկերացնում, թե ինչ է տեղի ունեցել ու որոշեցինք ռիսկի չդիմելու համար բնակիչներին տարահանել շենքից: Մենք նույնիսկ թունաքիմիկատների հարցերով զբաղվող մասնագետներ կանչեցինք»:

Կծան մարդը



Ոստիկանության աշխատակիցները միայն մի քանի ժամ հետո են կարողանում հայտնաբերել տհաճ հոտի աղբյուրը: Ի գարմանս բոլորի՝ պարզվում է, որ հոտը տարածվում էր շենքի 12-րդ հարկի օդափոխման համակարգում գտնվող ձիու քայքայվող լեշից: Մինչ օրս ոստիկանները գլուխ են կոտրում, թե ինչպես էր հսկա կենդանին հայտնվել շենքի 12-րդ հարկում, այն էլ օդափոխման համակարգի ուղիների խաչմերուկում:

Հնդկաստանի հարավում մի տղամարդ, իր հավանցից բաղդոնալու պահին բռնել ու կրծել էր թափառական շան կոկորդը: Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ կատաղած շունը վաղուց էր անհանգստացնում գյուղի բնակիչներին՝ հարձակվում էր մարդկանց վրա, ներխուժում հավանցներն ու սպանում ընտանի թռչուններին: Վաթսուհին գանյա տղամարդը, վերջապես բռնելով «հանցագործին», այլևս չի կարողանում զսպել իր գայրոյթը, եւ ձեռքի տակ որեւէ հարմար գործիք չգտնելով՝ գործի է դնում սեփական ատամները: Վրա հասած հարեանները «կռվողներին» անջատում են իրարից եւ սպանում կենդանուն: Տղամարդուն տեղափոխում են հիվանդանոց եւ ներարկում կատաղության դեմ: Չնայած՝ դեռ հայտնի չէ, թե նրանցից ով էր ավելի կատաղած:

Յոթանասուն խայթոց

Հնդկաստանի 56-ամյա բնակչուհի Սաթիա Դեյին ապացուցել է, որ մարդու օրգանիզմը կարող է դիմակայել ուժեղ թույների ազդեցությանը: Լեռնային գյուղերից մեկում ապրող գեղջկուհուն թունավոր օձերը խայթել են ավելի քան 70 անգամ: Այս յուրօրինակ երեւոյթը բացահայտելու վրա արդեն քանի տարի գլուխ են կոտ-



րում նաեւ Կասաուլի քաղաքի կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցները, որոնք զբաղվում են հակաթույների արտադրությամբ: Առաջին անգամ Սաթիան նրանց այցելել է 1980 թվականին, երբ թունավոր օձը խայթել էր նրան: Դրանից հետո Սաթիան, գրեթե «կանոնավոր» կերպով, տարին երկու անգամ, «հերթական» խայթոցից հետո գնում է գիտահետազոտական կենտրոն՝ բուժում ստանալու:

Ինքը՝ Սաթիան այնքան զբաղված է առօրյա հոգսերով, որ նույնիսկ դրա մասին մտածելու ժամանակ չունի: Բժիշկները հանգել են միակ տրամաբանական եզրակացությանը, որ թունավոր սողունների հաճախակի խայթոցներից հետո հակաթույնի ներարկում ստանալով՝ նրա օրգանիզմն արդեն ուժեղ իմունիտետ է ձեռք բերել տարբեր տեսակի թույների նկատմամբ:

Ապրանքը փող արժե

Վերջերս Միացյալ Նահանգների Յուջին քաղաքի կենդանաբանական խանութում Բիրմայից բերված երեքմետրանոց պիթոնը հարձակվում է խանութի տիրուհու վրա: Ժամանակին վրա հասած ոստիկանները հազիվ են կարողանում փրկել կնոջն անխուսափելի թվացող վերջաբանից: Պարզվում է, որ թերեզա Ռոսիթերը որոշել էր հսկա սողունին ինքնուրույն հանել տեռորիումից եւ ցույց տալ հաճախորդին: Օձն անսպասելիորեն հարձակվում է կնոջ վրա, կծում ձեռքն ու նրան տապալում գետնին: Խանութի այցելուն օգնություն է կանչում եւ մինչեւ ոստիկանների գալը հետեւում, որ օձը չփաթաթվի կնոջն ու չխեղդի նրան: Արագորեն վրա հասած ոստիկանները փորձում են սպանել օձին, սակայն խանութի տիրուհին թույլ չի տալիս. չէ որ այն մեծ գումար արժեք: Ոստիկանները ստիպված են լինում մասնագետ կանչել, որն էլ ազատում է թերեզային օձի պողպատե գրկախառնությունից:

Դոկ խարդախ, ճարպիկ, խաբեբա	Պ	Ոչ հաստ խաղողի չիր	Ընտանի կենդանի Ոգելից խմիչք	Պ	Աշխարհա- հոշակ տիկնիկ	Պ	Պ	Պ	Պ	
Պ		Պ	Պ		Արամ հա- չատրյանի բալետներից			Հավատա- ցյալների ընթրիք ժամ կող ... դամ	Տուն, կացարան կարճա- մթերք	
Վայրի խոզ Շենքի աղեղնածեւ ճակատ	Պ				Սարգա- կան պարզել	Պ		Պ	Պ	
Պ				Ուտեստ Թռչուն	Պ					
Արծաթա- փայլ մետաղ Ազի	Պ			Պ	Թվերի գաղտնի համակարգ	Պ	Մայր բարբա- ռային	Պ		
Պ			Պ	Պ	Պ			Թվացյալ, ոչ իրական	Նորու- թյուններ մտցնող	
Եվ թելի, եւ էլեկ- տրական		Լիճ Հյուս. Ամերիկա	Պ				Մոնոլո միայն	Պ	Պ	
Պ		Պ		Գիտական վարկած	Պ	Ֆրանկլին ... Ռուզվելտ	Պ			
Երեղակերտ բազկաթոռ Էգ ոչխար	Պ		Պ				Քրիստոսի մատնիչը	Վաչե Հով- սեփյանը երաժիշտ		
Պ				Պ			Պ			
... Բեկ-Նա- գարյանի անվան «Դայնիմ» կատուհի		Քաղաք Կանա- դայում					Ոչ բութ Շուրիկի ուսանո- րուհի ըն- կերուհին	Պ		
Պ		Պ			Պ		Պ			
Դեմքի կն- ժիռ դժգո- հուրացն ճան Թռչուն	Պ			Տղամարդու անդրկու- կասյան մենապար	Պ	Հեքիաթի հեղուկ Գավառ Տուրուբե- րանում	Պ	Պ		
Պ	Լուսա- նկար- չական պատկեր	Պ				Պ		Եվ երատ, եւ Կալիպե	Նեղ ու խոր հովիտ	
Պ				Կերակուր շան համար երկրագոր- ծական գործիք	Պ		Պ	Պ	Պ	
		Հնագույն զենք		Պ				Պ		
Պ							Պ	Պ		
	Եզրայուր անտիկ աշխարհի ...		Պ	Խաղողի եւ թի մրցա- կից օղի ստանալու հարցում	Պ		Պ	Պ		